5 ապրիլի 2012 թվականի N 400 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 202-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների հաշվարկման տեղեկատվական բազայի կարգավորման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) որոշման N 1 հավելվածում՝

ա. 11-րդ կետը «պետական եկամուտների կոմիտե ներկայացված» բառերից հետո լրացնել «հաշվետու տարվա շահութահարկի հաշվարկների (շահութահարկի պարզեցված հաշվարկների), ինչպես նաև» բառերով,

բ. 15-րդ կետի 3-րդ ենթակետը «ֆինանսական հաշվետվությունները» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև պետական եկամուտների կոմիտե ներկայացված հաշվետու տարվա շահութահարկի հաշվարկները (շահութահարկի պարզեցված հաշվարկները)» բառերով,

գ. 30-րդ կետում «մինչև ընթացիկ տարվա հուլիսի 15-ը» բառերը փոխարինել «վերջիններիս ստացման օրվանից մեկամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա հունիսի 25-ը» բառերով,

դ. 37-րդ կետի 2-րդ ենթակետը «ֆինանսական հաշվետվությունները,» բառերից հետո լրացնել «շահութահարկի (շահութահարկի պարզեցված) և» բառերով.

2) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ սյունակներով.

«

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը (հազ. դրամ)	Զուտ շահույթը (վնասը) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը (հազ. դրամ)	Շահութահարկի գծով ծախսը (փոխհատուցումը) (հազ. դրամ)
4.1	4.2	4.3

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: